

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից 2015թ. Երրորդ եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին

Հանրային իրազեկումը Վայոց ձորի մարզպետարանի աշխատանքային ծրագրի մաս է կազմում և կոչված է հիմնականում լուսաբանելու այդ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները, գործընթացները և դրանց արդյունքում սպասվող ակնկալիքներն ու ձեռքբերումները:

2015 թվականի հունվար հունիս ամիսներին մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվելով բաժնի կանոնադրությամբ և բաժնին վերապահված գործառնությունների, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրի պահանջներով՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

**ՏԵՂԵՎԱՏՎՈՒԹՅՈՒՆ** ԱՅԼ ԿԱՅՔԵՐՈՎ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐՈՎ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեության հանրային իրազեկումը մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից իրականացվել է «Միասնական տեղեկատվական հարթակ»-ի, մարզային «Վարդաձոր», «ԱգրոԿամուրջ» ամսաթերթի, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի, միջոցով:

**ՏԵՂԵՎԱՏՎՈՒԹՅՈՒՆ** ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԷԶԻ «ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱԺՆՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարզպետի գործունեության հրապարակայնությանն են ուղղված եղել նաև պաշտոնական կայքի «Նորություններ» բաժնի նյութերը: 2015թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզպետարանի պաշտոնական կայքի «Նորություններ» բաժնում տեղադրվել են 108 լուսաբանական նյութեր, որոնք լրատվական բնույթի հաղորդումներ են:

Դրանք արտացոլել են մարզպետի աշխատանքային գործունեությունը, մարզպետի՝ մարզի տարբեր համայնքներում կատարած աշխատանքային այցերը, մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելությունները, մարզի համայնքներում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը, տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ մարզպետարանում հրավիրված քննարկումները, կրթամշակութային անցուղարձը, ինչպես նաև ՀՀ և օտարերկրյա պատվիրակությունների մարզ կատարած աշխատանքային այցերը, մարզպետի հանդիպումները հանրապետական և միջազգային տարբեր կազմակերպությունների կամ նրանց ներկայացուցիչների հետ և այլ բնույթի աշխատանքները

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԷԶԻ ԱՅԼ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Կիսամյակի ընթացքում մշտապես թարմացվել են Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքի ներքոնշյալ բաժիններն իրենց ենթաբաժիններով.

- Մարզպետարան
  - Տեղեկատվական կենտրոն
  - Համայնքներ
  - Ծրագրեր և փաստաթղթեր
  - Մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակը
  - Ընդհանուր տեղեկություններ
  - Արտաքին կապեր
  - Իրավական ակտեր
  - Կազմակերպություններ
  - Քաղաքացիների ընդունելություն
  - Ազգային ծրագրեր
  - Հողերի կառավարում
  - Ըտանեկան նպաստի և հրատապ դրամական օգնության ցուցակներ
  - Հայտարարություններ
  - Քաղաքացիների ընդունելություն
  - Համազգային ծրագրեր
  - Ընտանեկան նպաստի և հրատապ դրամական օգնության ցուցակներ
  - ՀՀ քաղաքացի աշխատանքային միզրանտների կողմից աշխատանքային գործունեություն ծավալելու կարգի և պայմանների մասին
  - Դիմեք մեզ
  - Հղումներ
- Կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի պաշտանական կայքում բացվել է նոր բաժին ,, Հիվանդանոցային և արտահիվանդանոցային բուժօգնության և սպասարկման, ախտորոշիչ հետազոտությունների վճարովի ծառայությունների անվանացանկ,, վերնագրով և լրացվել համապատասխան նյութերով:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2015 թվականի առաջին կիսամյակում ԶԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից Վայոց ձորի մարզպետարանին տեղեկատվական հարցում չի արվել: Տեղեկատվական հարցում է արվել՝ 1-ը քաղաքացու, 1-ը ՀՀ ԿԳ նախարարության, 1-ը այլ կազմակերպության կողմից, որոնց պատասխան է տրվել օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ  
ՏՐՎՈՂ ԱՍՈՒԼԻՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2015 թվականի հուլիսի 30 –ին կազմակերպվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի մամուլի ասուլիսը 2015 թվականի առաջին կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գործունեության արդյունքների ամփոփման վերաբերյալ: Ասուլիսին մասնակցում էին մարզային ամսաթերթերի «Վարդաձոր», անկախ պարբերականի և «ԱգրոԿամուրջ», Վայոց ձորի ԳԱՄԿ – ի պաշտոնաթերթի խմբագիրները և մի շարք հասարակական կազմակերպությունների ղեկավարներ: Ասուլիսը լուսաբանվել է մարզպետարանի կայքի, մարզային ամսաթերթերի և «Հայաստանի Հանրապետություն», ՀՀ կառավարության պաշտոնական օրաթերթի և «Հանրապետական միասնական տեղեկատվական հարթակ», կայքի միջոցով: